

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

18033

Գ. Ի Խ Ո Կ

Հ Ա Դ Կ Ա Ս Ա Ն Բ  
Կ Ա Պ Ւ Տ Ա Հ Ի Լ Ծ Ի Տ Ա Կ

325.3(42.54)  

---

h-40

ՊԵՏՎՐԱՑ

1932

Ե Ե Ր Ե Վ Ա Ն

26 APR 2013

18033

325.3(42:54)+(9:323.2(54))

15 JAN 2013  
27 SEP 2006

Դ - 40

Գ. Բ Խ Ա Կ

Հ Ն Գ Կ Ա Ս Ա Ն Բ  
Կ Ա Պ Ի Տ Ա Լ Ի Լ Ծ Ի Տ Ա Կ

1607  
33448

Թարգմ. Ա Ր Ի Ի  
Հ. Զ Ո Ւ Մ Ա Ր Ա Յ  
Խ Ա Բ Ա Գ Ք Ե Բ

## ՀՆԴԿԱՍՏԱՆԻ—ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳԱՂՈԽԻ

Հնդկաստանը դանվում է Ասիայում, Հնդկական թերակղզում։Այդ թերակղզին յերեք կողմից շրջապատված է Հնդկական ովկիանոսով։ Հարկան յերկիրներից Հնդկաստանը բաժանվում է՝ անանցանելի յեռներով։

Միայն արևմտյան սահմանում, վորտեղ Հնդկաստանը սահմանակից է Ավգանստանին, ունեն մատչելի յեռնանցքեր։ Ավգանստանից դեռ գտնվում է կ.Ս.Հ.Մ. Հնդկաստանի տարածությունն Անգլիայի տարածությունից 18-20 անգամ մեծ է։ Հնդկաստանի բնակչությունը համասար է 350 միլիոնի, վոր 8 անգամ շատ է Անգլիայի բնակչությունից։

Հնդկաստանը հարուստ է յերկաթահանքերով, քարածուխով, համբակով, մարդանեցով, պղնձով, վորկով և արծաթով։

Տաք և մեղմ կլիմայի չնորհիվ Հնդկաստանում մշակում են բրինձ, ցորեն, բամբակ, թեյ, ջութ (ջութից պատրաստում են թոկ և կոպիտ զործվածքներ)։

Հնդկաստանում աճում են հազվագյուտ բույսեր, վորոնցից պատրաստում են թանգարժեք ներկեր, լիզակ և համեմներ (մեխակ, պղպեղ և այլն)։ Յեվրոպական բոլոր շուկաներում միլիոնավոր տոնն Հնդկական ապրոնքներ են վաճառվում, գլխավորագես հում նյութ, վորից պատրաստում են արդյունաբերական ապրանքներ և սննդամթերքներ։

Դաշտավայր պայման  
Դաշվիլս 6900 (ք)  
Հրատ. № 1929  
Գոտվիր 6145  
Տիրամ 2000

Բայց, Հնայտած արդ հարստությանը, բանվորները  
և գյուղացիները սոված են, և նրանց մեջ մահացու-  
թյունն աճում է:

Բայց ինչո՞ւ Հնդկաստանի աշխատավորությունը  
դանդում և արքապիսի ծանր զբության մեջ:

Վորագհետն Հնդկաստանի հանգիստանում և Անդ-  
րիայի գաղութը, մի յերկիր, վարին տիրել են անդ-  
րիական կապեսայիստները, վարոնք կողմագում ու  
շահագործում են բնակչությանը և կառավարում Հրնդ-  
կաստանը բոնության միջոցով:

Բայց ի՞նչպես ե պատահէլ, վոր անդիքական կա-  
պիսալիստները անորբնում են Հնդկաստան բոտ իրենց  
քմահածույթի:

Մոտ յերեք հարյուր տարի սրանից առաջ անդիքա-  
կան վաճառականներն սկսեցին փնտուել նոր չուկաներ:  
Անդիքան հարուստ առետրական յերկիր է, և անդիքա-  
կան վաճառականներին հարկավոր եյին չուկաներ իրենց  
տպրանքները վաճառելու համար:

Հնդկաստանը գետ այն ժամանակ հայտնի յեր վոր-  
պես գյուղատնտեսական հարուստ յերկիր: Յամաքա-  
յին ճանապարհով այսուեղ հատնելի շտո գետվար եր,  
իսկ ծովային ճանապարհի համար անհրաժեշտ եյին  
լավ նավեր: Այն ժամանականներում Անդիքան ուներ ա-  
ռետրական լավ նավեր:

Անդիքական վաճառականները հասնելով Հնդկաս-  
տան, տեսան, վոր յերկիրը թանդարժեք տպրանքների  
հարուստ աղբյուր և հանդիսանում:

Նրանք գործ գրին բոլոր ուժերը, վորպեսզի ար-  
րագիտեն առետրին: Այն ժամանակ Հնդկաստանը կա-  
ռավարվում եր առանձին իշխանների կողմից: Խորա-

մանկությամբ, խարերայությամբ, կաչառելով չընդա-  
կական իշխաններին, անդլիական վաճառական երը կա-  
մաց-կամաց իրենց ձեռքը վերցրին ամբողջ առևտուրը  
և տիրեցին յերկրի վորոշ մասին: Անդլիական կառա-  
վարությունը զենքի ուժով ուղիւ ում եր իր վաճառական-  
ներին, Հնդկաստան եր ուղարկում զորքեր:

Անդլիական կառավարությունն իր վաճառական-  
ների միջոցով կալմակերպում եր պատներալմներ Հընդ-  
կաստանի առաջ ձին ժողովուրդների իշխանների միջև:  
Խոստանալով աշակեցնել այս կամ այն իշխանին, անդ-  
լիացինքը նքանց հետ կնքում եյին գործարքներ և վո-  
րի հիման վրա տառանում եյին հող և իրենց ձեռքն եյին  
վերցնում յերկրի առևտուրը: Վորտեղ չեյին ողնում կա-  
շուոքը, առանձին իշխանների միջև սարքած պատե-  
րալմները, այսուեղ անդլիական կառավարությունը  
դենքի ուժով գրավում եր իրեն հարկավոր հողամա-  
սները, գշմանությունը և հաստատում իր որենքները:

1858 թվին Անդիքան վերջնականակի զբաղեց  
Հնդկաստանը և մինչև այժմ ամուր պահում և նրան  
իր ձեռքերում: Տիրելով Հնդկաստանին, անդլիական  
կապիտալիստներն առանձնապես հետապնդում եյին ի-  
րենց գասակարգային շահերը: Անդլիական կապիտա-  
լիստները շահագրգույծ եյին նրանում, վորուսովի  
ձեռք բերեն եժմն հում նյութ և թանգ գներով վաճա-  
ռեն իրենց աղլանքները: Այդ պատճառով ել անդլիա-  
կան կառավարությունը թույլ չեր տալիս զարդանալու  
Հնդկական արդյունաբերությանը, մասնավորապես  
ծանր արդյունաբերությանը, վորն արտադրում և մեռ-  
քնաները, մոտորներ, գազդյաններ և այլն: Անդլիա-  
կան վաճառականները և արդյունաբերողները ձեռք են

Թռնում բոլոր միջոցները, վորագեղի Հնդկաստանը  
Նրանցից բարձր գներով զնի արդյունաքերական առկ-  
բանք էր : Խոկ այդ կարող և լինել այն դեպքում միայն,  
յեթե Հնդկաստանը չունենա իրեն սեփական արդյու-  
նաբերությունը : Հնդկաստանի գյուղատնտեսությունից  
անգլիական կապիտալիստներն ստանում են հում նյութ՝  
առողարության և սննդամթերքի համար, մորոնուց  
Անգլիայում չի ճարվում հարկալոր քանակությամբ :  
Բերքից անկախ՝ ամեն տարի Հնդկաստանց արտա-  
հանվում և հարյուր-հազարամյուր տոնն ըրինձ և ցորեն :  
Այդ ժամանակացնում և Հնդկական բանկոների և պա-  
ղացիների ծանր զրությունը, վորի հետեւագով նրանք  
ել աւելի սահման են : Հայտապահության դուռան շատ-  
հաղործումն ուժեղանում և անգլիական կապիտալիստ-  
ների կողմից նրանց վրա դրված ուժերից վեր առը-  
քերի պատճառով :

Այդ տուրքերը ծախսվում են վոստիկանության, զորքի պահպանման վրա և հարստացնում են ա՛զլիական կապիտալիսաներին ու Հնդկական կալվածատերերին, վորոնք նրանց հետ միասին և շում են Հնդկաստանի աշխատավարությանը: Յերկաթուղային և ծովային տրանսպորտները գտնվում են անգիտացի երի ձեռքում: Անգլիական կառավարությունն առանձնապես բարձրաթիվ լավ յարկաբերուղային և խոռոշացր ճառապարհներ ե կառուցել Ավգանստանի սահմանում: Այդ ճառապարհներն Անգլիայի համար ունեն մեծ նշանակություն ԽՍՀՄ ղեկ պատերազմ պատրաստելու դործում:

Ներկա մոմենտում Անդիլիան, ինչպիս և մյուս կառ  
պիտալիստական յերկիրները, ապրում ե տնտեսական  
ծանր ճգնաժամ :



Բոլոր յերկիրների կապիտալիստները շատ չտհույթ  
ստանալու համար ձգում են, վորքան հնարավոր ե,  
շատ ապրա ք արտադրել: Նրանք ձգում են վաճառել  
այդ ապրանքը բարձր գներով: Վերջին տարիներում  
հոկայտիան քանակությամբ ապրանք և արտադրվել:

Պահևստները և խանութներն ապրանքներից արա-  
գում են, բայց կապիտալիստական յերկիրների բանվոր-  
ներն ու գյուղացիները/4. արավորություն չունեն գնելու  
այդ ապրանքները:

Զգտելով պահպանել իրենց վաստակը, կապիտա-  
լիստներն սկսում են կրծառել արտադրությունը, ե՛լ  
ավելի իջեցնում են աշխատավարձը, անց են կացնում  
կատվիստական ուսցիոնալիզացիան, վորի չնորհիվ  
գործադրկությունն ուժեղ կերպով աճում է: Այժմ կա-  
պիտալիստական յերկիրներում հաշվում են 35 միլիոն  
դորժայուրի: Աժամատափորության մեջ աղջատությունն  
ու քաղցն անընդհատ աճում են:

Ճգնաժամ: Ընդդրկել և նմանապես և գյուղատրն-  
տեսությունը: Գյուղատնտեսական մթերքների գներն  
ուժեղ չափով իջև են: Գյուղացիներն ստիլիած են  
եթան գնով վաճառել իրենց ապրանքները: Իսկ տուր-  
քերը չեւ իջնում:

Գործադրկությունը գյուղատնտեսական բանվորնե-  
րի միջև նույնպես ավելանում է, վողջ կապիտալիստա-  
կան յերկիրների գյուղացիության դրությունը վատթա-  
րանում է:

Եերկրի տնտեսական կյանքի խանդարման և անկ-  
ման այդպիսի դրությունը կոչվում և նզնամալ:

Այս պայմաններում կապիտալիստ եղը գիմում են  
հարձակման իրենց յերկրի բանվար գասակարգի գեմ:

ուժեղացնում են իրենց գաղութների շահագործումը:  
Այդպիս են վարչում և անդիմական կապիտալիստները:  
Հնդկաստանը հանդիսանում է Անդմայի ամենահա-  
րուստ գաղութը: Անդմայի կապիտալիստներն առ-  
ունձնապես ուժեղ են ճնշում հնդկական ժողովրդին և  
աշխատավորության հեղափոխական աշատաղրման  
շարժման դեմ մղում են համառ, արյունահեղ պայ-  
քար:

### Ի՞նքնի Են ՏիրաՊետություն ԽՄՊԵՐԻԱԼԻՍՏՆԵՐԸ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ

Հնդկաստանը բաժանված է 15 նահանգի: Ամեն մի  
նահանգի գլուխ կա դնուծ և անդմայի նահանգամենքը:

Ամբողջ Հնդկաստանի գլուխ կանգնած է փոխար-  
քան\*, վորին նշանակում և անդմական կառավարու-  
թյունը: Փոխարքան հանդիսանում է ամբողջ Հնդկա-  
կան բանակի հրամանատարը և իրավասու յև հրամա-  
րակելու և փոփոխելու ամեն տեսակի որենքներ:

Հնդկաստանն անի կառավարության, վորի ան-  
դամները և շանակիվում և արձակվում են փոխարքայի  
կողմից: Անդմայի կառավարությունը Հնդկաստա-  
նում պահում և շատ զորք: Բանակը բազկացած և զբա-  
խավորապես հնդկեներից: Հրամանատարական պաշ-  
տոն ները գտնվում են միմիայն անդմական սպանների  
ձեռքին: Հնդկական զինվորի կյանքի պայմանները  
վատ են, քան անդմայի զին վորի կյանքի պայմանները:  
Ա զինացու վրա ծախավում և չորս անդամ ավելի, քան  
հնդկացու վրա: Բանակներ պահելու համար Անդմայի

\* ) Փախարքան անդմական թագավորի տեղակալը Հնդկաս-  
տանում:

յերկրից կորդում և Հսկայական միջոցները՝ 1929-30 թվերին բանակի համար ծախսված և մոտ 410 միլիոն ռուբլի, իսկ առողջապահություն համար՝ միայն 47 միլիոն ռուբլի։ Այդ փողերը ծառայում են անդիմացիւներին։ Հնդկաստանի աշխատավորությունը հնարավարությունն չունի ստանալու անհրաժեշտ բժշկական ուղղություն, զունի ստանալու անհրաժեշտ բժշկական ուղղություն, գյուղերից և վոչ մեկում չկա բժիշկ, գյուղացիներին բժշկում են հեքիմները։ Ժողովրդական լուսավորության կարիքների համար կառավարությունը վոչի չ չի բաց թողնում։ Հնդկաստանում բնակչության հսկայական մեծամասնությունը անդրադեռ և։ Տղամարդկանց 10 տոկոսը, իսկ կանանց յերկու տոկոսն և միայն գրագետ։ Հնդկական բանվորների և գյուղացիների յերեխաները հնարավորություն չունեն սովորելու։ Դեռ մանուկ հասակից նրանք պետք է աշխատեն ապրելու համար։

Անդիմական տիրապետությունը Հնդկաստանին սարսափելի աղքատության դուռն և հասցըել։ Վերջին 25 տարում Հնդկաստանում սովոր մեռել են 80 միլիոն մարդ։ Այդ թվերը մերցրած են անգիտական կտոռավարության պաշտոնական տվյալներից մորի համար նպաստավոր չեն չափագանցնել բնակչության մահացությունը։

Ինչպես մեր յերկրում, նույնպես և Հնդկաստանում բնակչում են տարբեր ժողովուրդներ, տարբեր լեզուներով։ Յերկրում հաշվում են 12 հիմնական լեզու և միքանի տասնյակ տարբեր բարբառներ։ Հնդկաստանի բնակչության մեծամասնության՝ 220 միլիոնի կրոնը ինդուիզմն է։ Մահեղականներ հաշվում են մոտ 70 միլիոն։ Բնակչության հետամնացության և անգրա-

գիտության չնորմել անգլիական իմպերիալիզմը զեռ կարողանում և յերկրում ուժեղ կերպով բորբոքել աղքային և կրոնական թշնամությունը։

Հնդկաստանում գոյություն ունի կաստայականություն, վորման աշեկ և շատ հին ժամանակներից։ Կաստակոչվում և մարդկանց առանձին խումբը, վորոնք կապված են իրար հետ ընդհանուր շահերով և ծագումով։ Հնդկաստանում 4 այլպիսի հիմնական կաստաներ կան՝ բրահմիներ, այսինքն՝ կրոնավորներ, կշատրիներ՝ ուադիներ, վիխիներ՝ հողագործներ, սուդրաներ՝ արհեստավորներ։ Մի կատայի անդամն իրավունք չունի ուրիշ կաստա անցնելու, նրան արգելվում և ամուսնանալ ուրիշ կաստայի անդամի հետ։ Յեթե կաստայի անդամը լիախսում և նրա սովորությունը, նրան գուրս են վոնդում և նա դառնում և պարիա (անարգված), վորը համարվում և ամենից մերժված մարդը Հնդկաստանում։ Պարիաներ Հնդկաստանում հաշվում են 60 միլիոն։

Բոլոր կրոնների ներկայացուցիչները, ինչպես և Հնդկական և անգլիական կապիտալիստները, շահագըրքագրամած են պահպանելու բոլոր սնոտիապաշտությունները և հին սովորությունների մնացորդները։ Կալվանտաերերին, վաշխառուներին և կապիտալիստներին հեշտ և ճնշել տքետ և մութ մասսային։

Կատանաների բաժանումն աստիճանաբար վոչնչական է։ Պայքարն անգլիական իշխանության և Հնդկական կալվանտաերերի ու կապիտալիստների ճնշման դեմ են ավելի համախմբում և Հնդկաստանի աշխատավորներին, անկախ նրանից, թե ինչ կրոնի, կաստայի կամ աղքակ յեն պատկանում նրանք։ Անգլիական իմպերիա-

լիստները և Հնդկաստանի կապիտալիստներն ոգտագործում են բանվորների և գյուղացիների ամեն տեսակի աղջային, կրօնական և կաստայտկան տարրերությունները նրանց միմյանցից բաժանելու և ճնշելու նպատակով:

Անդլիական իշխանությունը գրգռում է իրար դեմ Հնդկիներին և մահմեղական երին, կազմակերպում է ջարդեր, վորագեսդի հեռացնի աշխատավորության ուշադրությունն իսկական ճնշումների գեմ մղվող պարագարից: Այդպես եր և ցարական Ռուսաստանում: յերբ հրյական, լեհական, ուռուական, թուրքական և ուրիշ բանվորները դուրս ելին գալիս ցարի դեմ, այն ժամանակ ցարական վոստիկանությունը կազմակերպում եր հրյական ջարդեր, հայ-թուրքական կոտորածներ:

Ավելի ու ավելի հաճախ գործադրումների ժամանակ չահազորման վեմ մղվող պայքարում տարբեր աղդությունների ու կրօնի բանվորները միասին են հանդես դավա, մահմեղական և հնդիկ գյուղացիները միասին են պայքարում կալվածատերների դեմ:

Հնդկաստանի աշխատավոր մասսայի կարեքն ու աղքատությունն այնքան մհծ է, վոր անդլիական իշխանությունը վոչ մի կերպ չի կարող խեղզել աշխատավոր մասսայի աճող և ամրացող համերաշխությունն ու հեղափոխականությունը:

Այդ բանը հասկա ալու համար բավական է իմանալ, թե ինչպես են ապրում Հնդկաստանի բանվորն ու գյուղացին:

### Ի՞ՆՉՊԵՍ ԵՆ ՃՆՇՈՒՄ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆԸ

Անդլիացիների տիրապետությունը Հնդկաստանում գյուղացիությանը սարսափելի աղքատության և հաստըրել: Հնդկաստանը բացառապես գյուղատնտեսական

յերկիր է: Գյուղացիությունն ամբողջ բնակչության յերեք քառորդն է կազմում:

Հնդկական գյուղերում գոյություն ունեն նորտական, սորկացուցիչ հարաբերություններ, վորուց աջակցում և անդլիական իշխանությունը: Հնդկաստանի հողերի կես մասից ամերին պատկանում է անդլիական կառավարությանը, իշխաններին, կալվածատերներին և կուլակներին:

Երջանների մեծամասնության մեջ անդլիացիներն իրենց որենքներով դյուղացիությանը գարձրել են հողի սեփականատերից — վարձակալներ: Անդլիացիները հնդկական կարգածատերներին իրավունք են տալիս առանց դատի բռնաշահավելու գյուղացիներից հողը, յեթե նրանք չեն վճարում վարձավճարը (արենգը), և բանտարկելու:

Գյուղացին՝ կալվածատերների կամայականության գումար վոչ վոքի և մոչ մի տեղ չի կարող բողոքել:

Արեւոտ վերցրած վոքքիկ հողամասի յեկամուտը հնարավորություն չի ատելու գյուղացում իր ժամանակին վճարելու վարձավճարը: Նա ստիպված է դիմելու վաշխառուներին — վոխատվություն ստանալու համար: Այդ վաշխառուն հանդիսանում է կալվածատերը կամ կուլակը:

Վաշխառությունը Հնդկաստանում ստրկության մի ձևն է: Գյուղացի պարտապանը վաշխառվի պահանջմամբ պարտավոր է աշխատել շատ չնչին վարձատրությամբ: Գյուղացին իրավունք չունի հեռանալու գյուղից առանց վաշխառվի թույլտվության:

Յեթե վաշխառուն ուրիշի յև ծախում իր հողերը, այն ժամանակ գյուղացիները նույնպես անցնում են նոր տիրոջ ձեռքը:

Գյուղացին ամբողջովին՝ կախումն ունենալով մաշակովից, ստիպված է իր ունեցած ամբողջ մթերքը վաճառել նրան։ Իսկ յեթե գյուղացին չունի ավելորդ փող կամ մթերք, ստիպված է իր բերքը մաճառել մաշխառվի կողմից նշանակված դներով։ Վաճառված բերքի ամբողջ յևկամուտը գնում է վաշխառվի ողբին։ Փոխատվության համար մաշխառուն անխնա պլոկում է հսկայական տոկոսներ։ Յեթե գյուղացին հնարավորություն չունի տոկոսները վճարելու, այն դեպքում մաշխառուն չնչին արժեքով դնում է նրա հողամասը և մթերքը։

Հնդկաստանի գյուղացիությունը խճճված է պարտքերի մեջ։ Բացի հիմնական հողային հարկից, կարվածատերը կամայականությամբ հավաքում և հարկեր, յեթե իր վարդուն կամ աղջկան ամուսնացնում է, յերբ կարվածատիրոջ մոտ վորեն մեկը մահանում է, յեթե գյուղացին ինքն է ուզում ամուսնահալ, յերբ նրան յերեխա յե ծնվում։ արագես անվերջ։ Գյուղացին անոպայման շարաթիվա մեջ միքանի որ պետք է աշխատի կարվածատիրոջ համար։ Իր աշխատանքի համար գյուղացին վոչինչ չի ստանում։ Ահա այդպիսի աշխատանքի ցայտուն որինակ։

Հնդկական կարվածատերերը վոստիկան ական գործակալների խոշոր շտատ են պահում, վորոնք հարկավոր են գյուղացիներից ուժերից վեր տուրքերը պլոկուր համար։ Զորքի և վոստիկանության պահպանման հսկայական ծախքերի ամբողջ ծանրությունն ընկում է գյուղացիության վրա։

Հնդկաստանի հողը շատ պտղաբեր է, իսկ կիման՝ տաք։ Միքանի շրջաններում բերքը հավաքում են տա-

բեկան յերկու-յերեք տնօտած։ Բայց անդիմական և հնդկական կատարայիսաների ճնշումը թույլ չի տալիս զարդանալու և բարելավելու գյուղական տնտեսությունը։ Բերքատվությունը ըսկում է։ Հնդկաստանի մեկ հնդկարը յերեք անգամ պակաս ցորեն և բրինձ և տաքիս, քան Անդրկայում կամ Յապոնիայում։ Հողի մշակման ձևը հնացել, ինչպես հարյուր տարի առաջ։ Գյուղացիության սարսափելի աղքատությունը և հողի մանր կտորների բաժանված լինելը հնարավորություն չի տալիս գործադրելու գյուղատնտեսական մեքենաներ։ Գյուղացիության մեծամասնությունը յերկու հնդկար հող ունի։ Հաճախ հողի այդ վոքքիկ կտորը բաժանված է լինում 100-200 կտորների։

Գյուղատնտեսական մեքենաները և հողի արհեստական պարարտացումը մատչելի յեն միայն կալվածատերերի։ և կուլակներին։ Գյուղացին մինչև անգամ իր հողը հնարավորություն չունի աղբով պարարտացնելու, վարովհետն չունի։ Անսունի աղբն սպտագործում և վորակն վառելիք։ Հնդկաստանում անտառներ չատ կան, բայց պատկանում են կառավարությանը։ Գյուղացիությունը միջացներ չունի վառելիք դնելու։

Մասնավորապես ծանր և բատրակների կյանքը։ Նրանք հաշվում են մոտ 37 միլիոն։ Բատրակի միջին յեկամուռը տարեկան 10 ռուբի, այսինքն՝ 7 ռուբլի ՌԴ կոպեկ է։ Բատրակները միշտ վախենում են զրկվել միսչի անգամ այդ չնչին զարացից։

Նրանք աշխատանք ունենում են տարվա միքանի ամբաներում միայն, իսկ մացած ժամանակ թափառում յերկում, աշխատանք վորոնելու համար։ Սովորաբար դաշտներում և նրանց տեղորոշումներում առարկներ։

Հնդկաստանի գյուղացիությունը քարչ և տալիս իր աղջակատ ու կիսաքաղց զոյս: Թյունը: Յուրաքանչյուր տարի համաձարակներից և Հիմանդրություններից դյուղում մեռնում են 5-6 միլիոն մարդ: Երեխաների միայն կեսն և ապրում մինչև աշխատունակության հասակը: Հընդկական գյուղում դասակարգային հակասությունները հետզհետև ուժեղանում են: Այսպիսով, դեմ առ դեմ կնազնած են մի կորմից հարյուր-միլիոնավոր գյուղացիությունն իր չնչին աշխատիկ հողամասով, մյուս կողմից՝ կարգածատերերը և կուլակները, վորոնց ձեռքին և գանգում Հնդկաստանի ամբողջ հողերի կեսից ավելին:

Գյուղացիությունը քանի զնում դրկվում և իր հողեց և գառնում և վաշխառվի հավատենական ստրուկը: Անընդհատ ափելանում են տուրքերը և կրօնավորների ու անգլիական չինովնիկների պլոկած հարկերը:

Հոգնած ու վատ մշակված հողի յեկամուտն անընդհատ ընկնում է:

Գյուղացիությունն այլևս ուժ չունի տանելու այդ ձնչումը և պայքարի յի դուրս դալիս շահագործողների՝ անգլիական կապիտալիստների և Հնդկական կարգածատերերի դեմ:

### Խ Ն Չ Պ Ե Ս Ե Ն Ճ Ո Ւ Մ Բ Ա Ն Վ Ո Ր Ո Ւ Թ Յ Ա Ն Բ

Բանվորների դրությունը Հնդկաստանում շատ ծանր է: Անգլիական կապիտալիստները հնդկական բարեժուաղիայի հետ միասին այս պես են ճնշում բանվորներին, վոր նրանց կյանքը քիչ բանով և տարբեր վում ստրուկի կյանքից:

Հնդկական բանվորի աշխատավարձը շատ ցածր է: Ուրիշ բանվորների համեմատությամբ՝ տեքոտիկի բան-

վորները լով են վարձատրվում, բայց չնայած դրան, այդ վարձատրությունն ել չատ ցածր է: Զույգ սկսեցի հսկայական մեծամասնությունն ամսական 17 ուուրուց բակաս և ստանում: Իսկ կանաչք այդ նույն աշխատանքի համար ստանում են մեկ և կես-յերկու անգամ պարկաս: Զույգակուհին վաստակում և ամսական 7-8 ուուրուց: Արդյունաբերության մյուս բնադրավառ երուժ աշխատավարձն ել ավելի ցածր է: Այդպիսի նվազագույն աշխատավարձով և կյանքի թանդրության պատճառով բանվորների մեծամասնությունը սովոր է: Մթերքութիւնը կը երջին ժամանակներում ուժեղ կերպով բարձրացի էն, իսկ աշխատավարձը մնացի և նույնը: Հըսող կական բանվորը գեթ որը մեկ անդամ կուչու ուստի հնարավորություն չունի: Վորպեսովի բանվորը եւուչունի, նա պետք է որակա՛: մի անձին ծախսի մեկ ուուրուցի: Բանվորների մեծամասնությունն ընտանիք ունի: Ծնողները հնարավորություն չունին կերպակելու իրենց յերեխաներին և ստիպված են նրանց 7-8 տարեկան հայակից ուղարկել աշխատանքի: Երեխաներն ընդունեն ստանում ևն յերկու ու կես ոուրիշ ամսական: Գործառնատերերը հնար են գոնում այդ աշխատավարձն և կտրել տուղանքների միջոցով և Բանվորները հաճախ վերջում մնում են առանց կոպեկի և վորպեսովի ամսվա վերջում մնում են առանց կոպեկի և վորպեսովի քաղցից չենունեն, ստիպված են փոխարինարար փողվերցնել վաշխառվից: Նա բանվորից հսկայական տուկուներ և պլոկում: Այդ վաշխառուն հանդիսանում է վարպետը:

Նույն ճեռնարկության մեջ աշխատող անգլիացի բանվորները միշտանի անգամ ավելի քեն ստանում, քան հազիկ բանվորները:


Հնդկաստանում, թուղթեւ և մյուս գաղութներում, անգլիական կապիտալիստները բոլոր միջոցներով ձրդում են բորբոքել աղջային և կրօնական թշնամություն բանվորների միջև։ Անգլիական կապիտալիստները յեւբարպացի բանվորներին ամելի յեն վճարում, վորպեսդի կաշառքի միջոցով։ բանց բաժանեն տեղացի հետամնաց բանվորական մասսան էրից։ Կապիտալիստները բոլոր յեւբոպացի բանվորների մեջ ձգտում են առնչություն սերմանել հնդկական բանվորների հանդեպ։

Մեծ ձեռն արկություններում բանվորական որը տեռում ե 10-12 ժամ, իսկ փոքր ձեռնարկություններում՝ 14-16 ժամ։ Ազահովաղրական դրամարկղ և ձրի բժըշկություն գոյություն չունի։ Բանվորների հիվանդության պատճառով թաց թողած որը համարվում ե գործալքում։

Բանվորի աշխատողվարձից դուրս են հանում նրա հիվանդության պատճառով կորցրած որևէի աշխատավարձը, և բացի այդ, տուղանքի յեն յենթարկում վարպես գործալիքի։ Մինչեւ անզամ ծննդարձերության համար բանվորուհին գոնե 2-3 որով արձակուրդ չի ստանում։ Բանվորուհիները հաճախ ծնում են գործարաններում։ Մի գիտական հետազոտել ե բանվորուհիների աշխատանքի պայմանները։ Այդ հետազոտությունը յերկում ե, զոր բանվորուհիների 388 յերեխաներից 139-ը ծնվել են դադդյահների մոտ, վարոնց առաջ մայրերն աշխատել են մինչև վերջին բոպեւ։

Բանվորների յերեխաների մեջ մահացությունը շատ մեծ է։

Հնդկական գործարաններում չկան վոչ աշխատանքի պաշտպանություն և վոչ ել գործարանային կոմիտ



Աշխատավարտներն շնորի վրա աշխատելիք։

տեսեր։ Հնդկական բանվորների բնակարանային պայմանները ծանր են։ Բոմբեյ քաղաքում, վորտեղ շատ գործարաններ կան, բանվորները պատսպարվում են հսկայական բանվորական կազարժմաներում։ Այդ տներն առաջ ձին սենյակներից են բաղկացած, բայց նրանց գիշերը շատ բարձր են, բանվորը հնարավորություն չունի իր ընտանիքի համար առանձին սենյակ վարձելու։ Մենք ական վարձում են կամ յերկու բնաւանիք միասին, կամ բանվորն իր սենյակի մի անկյունը վարձով տալիս ե ուրիշին։ Մենյակներում չկա վոչ մի կահավորում։ Քնում են մերի հաստակին։ Անհողնին փոխարենում ե չոր խոտը և մեկ աղեալ, վորով ծածկվում են 4-7 հոգի։ Բանվորներից շատերը վոչ մի անհյուս չունեն և գիշերն անց են կացնում փողոց երում, հրապարակներում կամ իրենց գործարանում։ Զան, եղաստրում թիթենի գործարանին կից կա բանվորական ավան՝ 330 տնակներով։ Այդ տնակերում ապրում են 3 հաշարից ավելի մարդիկ, կուտակված և ննջված դրության մեջ։ Բանվորներն այդ հյուղերի համար վճարում են իրենց ուժերից վեր բնակարանային վարձ։ 1929 թվի գործադրության վորոր, երբ հաստակ պահանջ ուրին բնակարանավարձի իշեցման համար, վորովհետեւ նրանց աշխատավարձի մէջ մասը գնում եր այդ կարիքի համար։

Կալկաթայի (Հնդկաստանի ամենախոշոր արդյունաբերական քաղաքը) շրջանում բնակարանային պայմաններն առինչի վատ են։ Բանվորները կուտակվում են բամբումի (մի տեսակ ծառ ե) ճյուղերից և ցեխով ծե-

փած վորքիկ խրճիթներում, կամ թե արմավենու թիվով ծածկված վրաներում։ Այդպիսի բնակարանները

շատ խախուտ են լինում։ Նրանք հաճախ քանդվում, վոչնչանում են քամիներից և անձրևներից, վորոնք Հնդկաստանում լինում են շատ ուժեղ և հարատես։ Հաղարավոր բանվորներ այդպիսի հեղեղներից հետո մնում են անսպասառն։

Ենք գործարանատիրոջը հարկավոր են լինում նոր բանվորներ, նրանք գյուղերն են ուղարկում իրենց Հավաքագրողներին։ Այդ հավաքագրողները մեկնում են ավելի հետ ընկած շոջանները, կամ այնպիսի վայրեր, վորտեղ մարզիկ տուժել են սովոր կամ հիգանդություններից։ Իսկ առաջիսի քրծաններ և վայրեր շնորհատանո մ շատ կան Սովոր հ տնտեսակես քայլայված դյուղացիներն ուրախությամբ են թողնում զյուղը։ Հայաքաղրողը նրանց հետ պայմաններ ե կնքում։ Գյուղացիության հսկայական մէծամասնությունն անդրադեպ ե և պայմանագիրը կարգալ չի կարող։ Իսկ պայմաններն այնպես են կաղմված լինում, վոր ստորագրող բանվորը գործարանատիրոջ մոտ ստրկական վիճակի մեջ և ընկնում։ Պայմանագիրը հաստատվում ե բանվորի մատի տպումով։


Ենք բանվորը մտադրվի փախչելու դժոխվ-գործարանից, այն ժամանակ վոստիկանությունը նրան գտնում ե, սկահակների հսկողությամբ վերադարձում ե ակրոջ մոտ՝ գործարան, հիմնելով այն բանի վրա, վոր բանվորն ստորագրել և պայմանին և իրավունք չունի խախտելու։

Այսպիսով բանվորը դառնում ե իսկական ստրուկ։ Այստավարձը բաժանելիս գործարանատերերը բանվորներին հաշիվների մեջ խարում են։ Բանվորների հաշիվները գրավոր չեն պահում։ Գործարանատերն իր ուզած ժամանակ բանվորին կարող ե տուգանել և դուրս

անել։ Յեթև բանվորը դիմի գտառաքան, ևս միշտ մեզա-  
վոր դուրս կցա։ Դատարանը և վոստիկանությունը  
զանվում են անդիթական և հնդկական բուրժուազիայի  
ձեռքին։ Ներկայիս ճղնաժամի պատճառով բանվորի  
դրությունն ել ամելի վատթարացել է։ Շատ դործա-  
րաններ կանգ են առել, կամ աշխատում են վոչլրիվ  
շաբաթ։

Հնդկաստանում դործաղրկությունն աճում է, և նրա  
հետ միասին ավելանում են սովուր բանվորների աղ-  
քառացումը։

Հնդկաստանում դորություն ունեն պրոֆմիություն-  
ներ, բայց նրանք բանվորների շահերը չեն պաշտպա-  
նում։ Այդ նրանից ե առաջ զարիս, մոր պրոֆմիու-  
թյուններին մեծ մասամբ դեկավարում են բուրժուազիա-  
յի արբանյակները։ Պրոֆմիություններին դեկավարում  
են վոչ թե բանվորները, այլ ծառայողների ու ինտելի-  
գենցիայի շարքերից դուրս յեկած մարդիկ, վորոնց առ-  
հերը կապված ե բուրժուազիայի հետ։ Այդ պրոֆմիու-  
թյունները չեն կապված բանվորական մասսաների հետ։  
Պրոֆմիության շատ դեկավարներ մասնակցում են զա-  
նազան հանձնաժողովներում, վորոնք կազմվում են  
բուրժուազիայի կողմից։ Այդ հանձնաժողովներում  
տարած աշխատանքների համար կապիտալիստները  
նրանց վարձատրում են և այդպիսով կաշառում են  
նրանց և զարձնում իրենց հալատարիմ ծառաները։  
Պրոֆմիությունների արդարիսի դեկավարները չեն ձըգ-  
տում բանվորներին պայքարի դուրս բերել իրանց դա-  
սակարգային շահերի համար, այլ ընդհակառակը, ամեն  
կերպ աշխատում են թույլ չտալ այդ պայքարը։ Բանվո-  
րի և տիրոջ մեջ յեղած ամեն տեսակի վեճերը, ասում են  
նրանք, պետք ե լուծել իսազար ճանապարհով, բանակ-



Բանվորական հժու ուժն անազին շահույթ և տակին  
կապիտալիստներին։

շությունների միջոցով, վորովէհտե բանվորների և  
տերերի շահերն ընդհանուր են:

Բուրժուազիայի արքանակներն այդպես են մթաղ-  
նում և գործադուլի, այն ժամանակ պրոֆմիությունների  
քնիցնում նրանց զդոնությունը: Իսկ յերբ գործը Հաս-  
նում է գործադուլի, այն ժամանակ սրբոֆմիությունների  
զեկուալայնները դաշաճանում են. բայց յերի շահերն:

Եթեր բանվորները դործադուլի ընթացքում համոզ-  
վեցին, վոր պրոֆմիությունները պաշտպանում են կա-  
պիտականներին, այն ժամանակ նրանք սկսեցին կաղ-  
մակերպել իրենց պրոֆմիությունները: Առաջև հեղա-  
փոխական պրոֆմիությունը կաղմակերպեցին ժամանակ-  
գործները: Նա կոչվում է «Դիբնի կամդար» («Կարմիր  
ջահ»): Այդ պրոֆմիությունը զեկավարում են հեղա-  
փոխական բանվորները և կամունիսաները:

«Դիբնի կամդար»-ը կաղմակերպել եմ ի շարք դոր-  
ժադույներ, ձեռք ե բերել այստավարձի որվա կրծա-  
տում:

«Դիբնի կամդար»-ը բանվորներին կաղմակերպում  
ե պայքարելու համար անզլիքական և Հնդկական բուր-  
ժուազիայի կրկնակի ճնշումից ազատազրվելու նպատա-  
կով:

Այս պայքարում Հնդկուստանի բանվորությունը  
վունիչ չունի կորցնելու՝ բացի սորեկան շղթաներից,  
բռնությունից և զաժան շահագործումից:

### ՍՆԻԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԵՂԱՓՈԽԱՎՐԱՆ ՊԱՅՔԱՐՆ ՈՒԺԵՂԱՆՈՒՄ Ե

Իմպերիալիստական պատերազմը վերջացնելուց,  
մանավանդ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո,  
հեղափոխական շարժման ալիքն ուժնորեն լարձրաց գոլոր յերկիրներում: Գլմպերիալիստական պատերազմն

արթնացրեց Արևելքը և նրա ժողովուրդներին ներդրա-  
վեց միջադալին քաղաքականության մեջ», ասում եր  
լենինը: Հնդկական բուրժուազիան պատերազմի ժամա-  
նակ ողնեց Անդլիային և հատուցում պահանջնեց այդ ող-  
նության համար: Հնդկական բուրժուազիան Անդլիայից  
ավելի լայն իրավունքներ եր պահանջում՝ յերկիրը կա-  
ռավարելու դործում:


Իմպերիալիստական պատերազմն առանձնապես  
շատ բան սովորեցրեց Հնդկաստանի բանվորներին և  
գյուղացիներին: Անդլիան վորք եր տանում Հնդկաստա-  
նից Գերմանիայի ղեմ պատերազմելու համար: Անդլիա-  
յի կայմում ելին նրանցից Հարվածային դնուեր և Ֆրոն-  
տի ամենավայրագույր տեղերն ելին զցում: Շատ հրն-  
դիկներ են վոչնչացել, շատերն են հաշմանդամ դառնու-  
թի ամպերիալիստները Հնդկաստանի աշխատավորության  
համար զուր չի անցել:

Հնդկական միլիոնավոր բանվորներին ու գյուղա-  
ցիներին, վորոնք գարերով ճնշվել են անդլիական կա-  
պիտականների կողմից, պատերազմը ցույց տվեց,  
վոր իմպերիալիստների տիրապետությունը հավիտենա-  
կան չե: Կենդանի մնացած և տուն վերադաշ դին-  
վորները պատմում ելին Ցելյուլայի բանվորների կյան-  
քի և պայքարի մասին:

Հոկտեմբերյան հեղափոխությունն առանձնապես ու-  
ժեղ է երազով շարժեց բանվորական և զյուղացիական  
ժամանակներին: Հնդկական միլիոնավոր բանվորության  
մեջ արթնանում և որ-ավուր աճում ե հեղափոխական  
գիտակցությունը: Հոկտեմբերյան հեղափոխությունը  
ցույց տվեց Հնդկաստանի աշխատավորությանը, թե  
ինչպես պետք ե պայքարել կապիտալիստների գնեմ:

Պատերազմի վտիւնանը արթեացրեց յերկրում քեած  
հեղափոխական ուժ երին:

Պատերազմի ժամանակ Անդլիան ստրափած երթույլաբելու հնդկական արդյունաբերության մասնակի աշխուժացումը : Հարյուր-հազարավոր մարդիկ գործարաններում աշխատում եյին Անդլիայի ռազմական կարիքների համար : Պատերազմի ժամանակ անդլիական կառավարությունը չնշին դիջումներ արեց հնդկական բուրժուարդյային : Իսկ պատերազմից հետո անդլիական կառավարությունը նորից ուժեղացրեց Հնդկաստանի ճնշումն ու շահագործումը : Վորաբենդի ծածկի իր պարտքերը, անդլիական կառավարությունն ավելացրեց տուրքերն ի հաշիվ աշխատավորության : 1918-1921 թը վերի ընթացքում վորդ Հնդկաստանում զարգանում ե հեղափոխական շարժումը : Բանվորները կազմակերպում են զործադուլներ, ցույցեր : Սկսվում են զյուղացիության մասսայական յելույթներ բարձր տուրքերի և կալվածատերերին տրվող ուժերից վեր վճարումների դեմ : Գյուղացիները քարուքա՞լու ևն անում վոստիկանատները, սպանում են վոստիկանության ներկայացուցիչներին, հրաժարվում են տուրք վճարելուց : Հնդկական բուրժուազիան, ծառայողները մանր առետրականները և արհեստավորները նույնակես դուրս են զալսում անդլիական իշխանության դեմ : Նրանք կազմակերպում են միտինդներ, ժողովներ, վորտեղ անդլիական իշխանությանը սպահաններ են ներկայացնում իրենց իրավունքների լայնացման մասին : Տուրելուազիան ամբողջ Հնդկաստանի բանվորությանը կոչ և անում չըսնել անդլիական աօլրանքներ և չենթարկվել անդլիական սրինգներին :




Անգլիական վաստիկանությունը ցրում և հնդիկների  
ցույցը:

Նիւտական կուսակցություն չուներ։ Բաղմամի հովագուղիությունը ճնշված լինելով անդիմական կառավարության և Հնդկական կալվածատերերի կողմից, փոշիացած եր, անհազմակերպ և բանվոր դասակարգի հետ կազ չուներ։ Հնդկական բուրժուազիան ուժուգործում եր մասսայի հեղափոխական շարժումն իր սեփական իրավունքները լայնացնելու համար՝ սահմանափակելով Անդիմական տիրապետությունը և ուժեղացնելով բանվորների ու գյուղացիների շահազործումը։ Բուրժուազիան արդեն այն ժամանակ ուներ ուժեղ կուսակցություն, վար կոչվում և «Ազգային կոնգրես»։

Այդ կուսակցության ղլուխը կանգնած և Գանդին։ Հնդկաստանի աշխատավոր մասսան չունեալով իր համար կափած կոմունիստական կուսակցություն, սխալմամբ Գանդիին ընդունում եր վորպես առաջնորդ անդմական կապիտալիստների ղեմ մղած աղատադրման պայքարում։ 1930 թի սկզբներին, յերբ Գանդին տեսավ, վոր ծավալվում ու զարդանում ե բանվորների ու գյուղացիների հեղափոխական պայքարը, հայտնեց, վոր ինքը և Ազգային կոնգրեսը պայքարելու յեն անդիմական տիրապետության դեմ։ Այնուհետու են նրանք պայքարում։ Գանդին կոչ եր անում խախտել միքանի առանձնապես առելի որենքներ, վորոնք Հնդկաստանում հաստատվել եյին անդմական կապիտալիստների կողմից։

Գանդին և Ազգային կոնգրեսը կոչ եյին անում խախտել աղի որենքները և ինքները պատրաստել աղը, խանգարել վոդելից խմիչքներ պատրաստելը և վաճառելը։ Աղ պատրաստելը և վոդելից խմիչքի վաճառքը գրանցվում եր բացառապես անդմական իշխանության ձեռքին։



Աշխատավորության շահերի դավանաները—Գանդին  
կենորոնում և նրա մերձակոր կողմանակիցները։

Անդկական որենքները խախտելու համար Գանդիի  
և Ազգային կողմենի կողմէից բաց թողած այդ կոչը վոչ  
այլ ինչ եր, յեթե վոչ խորամանկություն՝ նպատակ ու  
ննալով իր կողմը զբավել աշխատավոր լայն մասսա-  
ներին և թեքել նրան անդկական իմպերիալիզմից  
Հնդկաստանը լիովին աղատազրելու իսկական պայքա-  
րի ճանապարհից :

Գանդիին և կոնդրեսին հաջողվեց զբավել իրենց կող-  
մը աշխատավոր բնակչության նշանավոր մասը : Բայց  
յերբ պայքարն սկսեց լայն կերպով զարդանալ և հեղա-  
փոխական ձև ընդունել, այն ժամանակ պարզվեց և ցայ-  
տուն կերպով յերեան հանվեց Գանդիի ու կոնդրեսի  
և բանվորների ու գյուղացիների դասակարգային պայ-  
քարի տարրերությունը :

Գանդին և նրա կռասակցությունը կոչ ելին անում  
բոյկոտի յենթարկել միայն անդկական վորոշ որենք-  
ներ, բայց մինույն ժամանակ կոչ ելին անում և հա-  
մոզում աշխատավոր մասսաներին խաղաղ ապրել կալ-  
վածատերերի հետ և հարցել թալանչի-վաշխառու-  
ների և կապիտալիստների մասնավոր սեփականությու-  
նը : Գյուղացիները և բանվորները չելին ցանկանում և  
չեն ել ցանկանում կանգ առնել սկսած պայքարի կես  
ճանապարհին :

Զառուրի-Զառուրա շրջանի գյուղացիները հրաժար-  
վեցին անդկական իշխանությանը տուրք վճարելուց,  
վորին Գանդին տվել եր իր համաձայնությունը :

Երբ գյուղացիները դադարեցին վճարել արենդը  
և հնդկական կարվածատերերի բարձաթիվ հարկերը,  
Գանդին բողոքեց : Գանդին պահանջեց, վորպեսդի գյու-  
ղացիներն իրենց արենդն անմիջապես վճարեն կար-  
վածատերերին : Այդ սրինակից պարզ քարեւմ ե, վոր

հնդկական բուրժուազիան հեղափոխական շարժում-  
ության գործում և միայն իր գասահարգային նպատակնե-  
րի համար և դավաճանում և բանվորների ու գյուղացի-  
ների շահերին : Հնդկական բուրժուազիի պայքարն  
անդկական տիրապետության դեմ հետապնդում և մի  
հիմնական նպատակ՝ վերցնել իշխանությունն իր ձեռ-  
քը, հնարավորություն ստանալ մենամենակ շահագործե-  
լու բանվորին ու գյուղացուն : Հնդկաստանի բուրժուա-  
զիան չի ուղղում աշխատավորության շահագործումից  
ստացած հսկայական յեկամուտը բաժանել անդկական  
կապիտալիստների հետ :

Անդկական կատավարությունը, հեղափոխական  
շարժման ճնշման տակ, հնդկական բուրժուատիտին  
տվեց աննշան իրավունքներ՝ Հնդկաստանը կառավարե-  
լու համար : Կաշառելով հնդկական բուրժուադիտին,  
անդկական իշխանությունն աշխատում և արյան ծովի  
մեջ խեղեկ բանվորների և գյուղացիների հեղափոխա-  
կան շարժումը :

Իր գաֆանությամբ առանձնակի կերպով աչքի ըն-  
կավ անդկական գեներալ Դայերը Սմրիցար քաղա-  
քում : Տեղական բնակչությունը բողոքեց յերկու հեղա-  
փոխականի ձերբակալման դեմ և քաղաքային պարտե-  
զում կարմակերպեց մեծ մխտիդ : Գեներալ Դայերը  
զում կարմակերպեց պարտեզը և երակ բաց արեց հա-  
զորքերով շրջապատեղ պարտեզը և երակ բաց արեց հա-  
զորքածների վրա : Սպանվեցին 1200 մարդ և վերա-  
գրվեցին մոտ 3600 հոգի, իսկ մահվան և ցմահ բան-  
տարկության դատապարտվեցին 581 հոգի : Գեներալ  
Դայերը անդկական կառավարության կողմէից պարզե-  
վատրվեց այդ արյունակի վոճրի համար : Ահա թե ինչ-  
պես են անդկական կապիտալիստները կառավարում  
կենց գագաւթները :

Անգլիական կառավարությունը դաժանորեն ճշն-  
չում և հեղափոխականորեն տրամադրված բանվորներին  
և գյուղացիներին։ բայց բանվորների և գյուղացիների  
հեղափոխական շարժումը յերկար ժամանակ ճնշել՝ ան-  
հնարին է։ Կապիտալիստների կողմից շահագործման  
աճմանը բանվորները պատասխանում են գործադուլնե-  
րով։ Գործադուլի ժամանակ բանվորները ներկայաց-  
նում են տնտեսական և քաղաքական պահանջներ։

Շոլազուր քաղաքի մանածագործները հայտարարե-  
ցին գործադուլ ինչպես բողոքի հեղափոխականորեն  
տրամադրված բանվորների ձերբակալման դեմ։ Մանա-  
ծագործները կազմակերպեցին ցույց և գուրս յեկան  
փողոց, պահանջելով ազատությունը բանվորներին։ Հյա-  
նությունը բանվորների դեմ ուղարկեց վոստիկանու-  
թյուն և զորք, ցույցը ցրելու հրամանով։ Վոստիկա-  
նության և բանվորների միջև տեղի ունեցալ ընդ-  
հարում։ Բանվորները զինաթափ արին վոստիկա-  
նությանը, հրդեհեցին վոստիկանական մասը, իսկ  
եշխանությունը քաղաքից փախալ։ Ապստամբությու-  
նը ճնշելու համար ուրիշ քաղաքից կանչվեցին դորքեր։  
Ապստամբությունը ճնշվեց։ Շատերն սպանվեցին և վե-  
րափորչեցին։ Ել ավելի համար դիմադրություն ցույց  
տվեցին անգլիական կապիտալիստներին Պեշամիր քա-  
ղաքում։ Այսուղ ցույցը վեր ածվեց զինված ապստամ-  
բության։

Միքանի դորամաներ, վորոնք կանչված ելին բան-  
վորներին ճնշելու, հրամարիվելին կրակելուց։

Ապստամբած բանվորներին միացան ըջակա գյու-  
ղերի գյուղացիները, վորոնց համար անտանելի ելին  
գառել ծանր տուրքերը և կալվածատերերի ու չինով-

նիկների այդ ճնշումները։ Միանի որ Պեշամիրը գրա-  
նցվում էր ապստամբ բանվորների և գյուղացիների ձեռ-  
քին։ Բայց այդ ապստամբությունը ևս արյան մեջ  
խեղղվեց։

Զնայած ապստամբության դաժան ճնշման՝ բան-  
վորները և գյուղացիները հայտաբերում ելին բացառիկ  
արբություն և հեղափոխական տոկունություն։

Ընկեր Ստալինը ասել է, վոր՝

«Պարտնայք բարեւանենք հույս են դնում այդ  
յերկիրների արյամբ վարդելու և վաստիանական սվիբ-  
ների վրա՝ ոզնություն կանչելով Գանդիի նման մարդ-  
կան։ Կանկած չի կարող լինել, վոր վաստիկանական  
սվիբները վաս հենարան են։ Եր ժամանակին ցարիզմը  
հույնակես աշխատեց հենվել վաստիկանական սվիբների  
վրա, բայց դրանից ինչպիսի հենարան դուրս յեկավ-  
բոլորին հաւաքի յի։»

Բաղմաթիլ գործադուներից առանձնապես նշա-  
նակություն ունի Բամբեկի մանածագործների գործա-  
դուլը։ 1928 թվի ապրիլին Բամբեյում բռնկվեց գործա-  
դուլ։ 84 որդարաններում անմիջապես կանգ առան աշ-  
խատակները։

Զնայած համաձայնողական պրոֆեսիոնալիստյան դավա-  
ձանությանը, գործադուր շարունակվեց վեց ամիս։  
Բանվորները դիմակացելով պրոֆեսիոնալիստյունների առաջ-  
նորդների դավաճանությունը, կազմակերպեցին իրենց  
հեղափոխական «Դիբնի կամգոր» պրոֆեսիոնալիստյունը։  
Գործադուները զեկավարելու համար բանվորներն առ-  
ուաց բանեցին կոմունիստներին և հեղափոխական բան-  
վորներին։

Եւ ավելի խոշոր գործադուլ մեջամ 1929 թվին  
կալվաթայում, ջութի գործարանում։ Գործադուլն

ժամանակցում ելիք 126 հազար բանվաբներ : Բայց ի՞րքը վաստիկանությունը կրակեց ցուցարարների վրա, որը ծաղուամունեով թիվը հասավ մինչև 200 հազարի :

Ըսկեր Մոլոտովը մատնանշել է, վոր՝

«Հեղափոխական վերելքը շնորհատանում վերածվում է վոչ նվազ չափով բարեմաթիվն մասսաների զորքեղ հեղափոխական յելույրի» :

Գյուղացիական շարժումը վերջին տարիներում բարձրանին ուժեղացրագիւմ : Մասնաւորապես ցաւոսուն որիների և ծառաւում Բարդոյի շոջանի գուռացիստեան շարժումը : Այսուղ գյուղացիները փորձեցին ստեղծել իրենց իշխանությունը : Առանց գյուղացիական կոմիտեայի թույլտվության կառավարական չինովնիկները չելին կարող ստանալ վոչ հաց, վոչ ջուր և վոչ ել անհրաժեշտ պիտույքներ : Ապատամբ գյուղացիների գեմ անդիրական իշխանությունը ուղարկեց սրատժիչ ջոկատ : Այդ ջոկատը կազմված եր ւերկու հետեւակ ոնորից, զնդացրավոր վաշտից, 2 հեծյալ եսկարդրունից, 12 զրահապատ ավտոներից և ողանավերի առրմիլից : Այդ սրատժիչ ջոկատը վայրենաբար ճնշեց գյուղացիական առևտամբությունը :

Բանվորական և գյուղացիական շարժումը Շնդկաստանում գեռ նոր և և թույլ է կարմակերպված, բայց բանվորներն ու գյուղացիները պայքարի փորձից համոզվեցին պրոֆմիության առաջնորդների, Պանդիի գլխավորությամբ Աղջային կոնքին դավաճանական դերի մասին :

Հնդկաստանի աշխատավորության ճնշումն առանձնապես ուժեղացավ այն ժամանակի, յեր Անգլիայում իշխանության զլույթ եր կանդնած մի կառավարություն, վոր իրեն կոչում եր «բանվորական» : Բայց իւրք գա իսկական կապիտալիտական կառավարության

եր : Այդ կառավարության գլուխ կանգնած եր Մակդոնալդը, վորն իրեն համարում եր սոցիալիստ :

Մակդոնալդի կառավարությունը, ինչպես և բոլոր կապիտալիստական կառավարություններն իրենց գաղութիներում գագանորեն ճնշում են հնդկական բանվորների և գյուղացիների ամեն տեսակի փորձը—իրենց դրությունը բարելավելու համար \*). Գանդին և Մակդոնալդը,—բանվոր զասակարգի շահերի այդ յերկու դավաձանները միակատար, համաձայնության մեջ են : Նրանք ընդհանուր ուժերով պայքարում են հնդկական բանվորի և գյուղացյուն վեմ :

Այդ դավաձանություններն ավելի ու ավելի ելին

\*) Անգլիական «բանվորական» կուսակցությունը իր թե Հնդկաստանին «սահմանադրություն» ավեց : Բայց այդ «սահմանադրություն» ուրիշ բան չեր, բայց յեթե անգլիական և հնդկաստան բուրժուազիայի փոխադրձ կամպրոցիների ի հաշիվ Հնդկաստանի բանվորների և յոյւղացիների չափագործման : Այս սահմանադրության համաձայն Հնդկաստանի բուրժուազիան յերկրի կռավարման գործում վորոշ իրավունքներ և ստանում, օսկայն դրա փոխարեն անգլիական իմպերիալիզմը Հնդկաստանի բուրժուազիային դարձնում է իր հավատարիմ ծառան ԽՍՀՄ գեմ սրաբառամբ նախագաղթի նախագաղթաման գործում : Հնդկաստանն եր աշխարհագրական զիրքով ԽՍՀՄ գեմ պատերազմի կորենոր ողակներից մեկն ե (Արդիանստանի վրայով) : Այդ սրատձառով ել անգլիական իմպերիալիտաները հանձին «բանվորական» կառավարության լեզու զառան Հնդկական բուրժուազիայի հետ հականորդությունն ունենալու համար : պատերազմի զեղուում նրա սժանդակությունն ունենալու համար : «Բանվորական» կառավարության քաղաքականությունը Հնդկաստանում այնքան ձեռնառու յեր անգլիական իմպերիալիզմին, վոր առանձնապես այնքան ձեռնառու յեր անգլիական (բուրժուազիան) կառավարության առաջնորդ Բուրժուազիա չնորհակալություն և հայտնել Մակդոնալդը, բուրժուազիայի այսինքն, «բանվորական» կառավարության պետին, վոր նա շատ ավելի լավ և պաշտպանում Անգլիայի (այսինքն անգլիական իմպերիալիզմի) չափեցը, քան պահպանողական կառավարությունը :

բաց սնուում աշխատավոր լայն մասսաների աչքերը ։  
Վերջին ժամանակներում բանվորներն ու գյուղացիները  
հնարավորություն ունեցան գործնականում համոզվելու  
Գանդի՛ և նրա կուսակցության դավաճանական դերի  
մասին։ Գանդին յերբ տեսալ, վոր գյուղացիների հե-  
ղափոխական յելույթին սպառնում և կալվածատերերի և  
կաղինաւախտոների շահերին, շտապեց համաձայնու-  
թյուն կնքել անզլիական իշխանության հետ։

Բանտից արձակեցին Գանդիի կուսակցություններին,  
բայց հետո ել ամիելի դաման պատշիժների ու մահվան  
յնթարկեցին իսկական հեղափոխականներին, վորոնք  
պաշտպանում ելին բանվորների և գյուղացիների շա-  
հերը։

Գանդի՛ անզլիական իշխանության հետ կնքած հա-  
մաձայ ության հիման վրա հնդկական բուրժուազիան  
ստանում և անշամն իրավունքներ յերկիրը կառավարե-  
լու գործում, բայց անդիմական չինովնիկների խիստ և  
անփոփոխ իշխանությունը մնում է իր ուժի մեջ։ Հընկ-  
կական վաճառականներն արտոնություն ստացան նա-  
վազնացության, առևարի և արդյունաբերության մեջ։  
Հնդկական բուրժուազիան Գանդի՛ զինավորությամբ  
իրեն համար անզլիական իշխանությունից արտոնու-  
թյուններ շահեց, դավաճանելով բանվորների և գյու-  
ղացիների շահերի։

Գանդի՛ անդիմական իմունիտիվմի հետ համա-  
ձայնության դալուց հետո հնդկաթայում մահվան դա-  
տապարտվեցին հիսագաթ Սինխը և ուրիշ յերկու ընկեր-  
ներ, բանվորական գործի համար տռկուն և անձնվեր  
ժարտնչողներ։ Նրանք մահվան դատապարտվեցին չնա-  
յած այն բանին, վոր Հնդկաստանի և ամբողջ աշխարհի

աշխատավոր մասսաները պահանջում ենին ազատ ար-  
ձակել նրանց։

Հնդկաստանի աշխատավոր մասսաները Գանգիի  
դավաճանությանը պատասխանեցին բուռն բողոքով։  
Գործադրություն պայքարի ուժեղացավ։ Կարկաթայում  
կործությու արեցին մոտ 100 հազար բանվորներ։ Կառն-  
պուր քաղաքում բանվորների և քաղաքի չքավորության  
աղբառամբաւթյուն բռնկվեց։ Մոտ տաս հազար  
կաղինաւախտոներ փախան քաղաքից։ Անզլիական իշխա-  
նությունը զորք և վոստիկանություն ուղարկեց ապօս-  
տամբությունը ձնչելու համար։ Ապօստամբներին ձնչե-  
լու ժամանակ սպանվեցին մոտ հազար հոգի և 4 հազա-  
րից ավելի զիրավորվեցին։

Գանդի՛ առոր համբաժայությունն անզլիական իշ-  
խանության հետ համանություն եր գտել Ազգային  
կոնգրեսի այնպիսի սուսնորդների կողմէց, Ի՞նչպիսիք  
են Ներուն կամ Բոգը, Վորոնք իրենց համարում ենին  
հեղափոխականներ, Հնդկաստանի ազտառդրման հա-  
մար մարտնչողներ։ Ներուի, Բոգի և մյուսների այլ  
գավաճանությունը բանվորներին համոզեց այն բա-  
նում, վոր յեթե բանվորները կամենում են հաջողու-  
թյամբ պայքարել իրենց շահերի համար, անհրաժեշտ  
և առաջին հերթին իրենց սեփական շարքերից գուրս  
շպրտել դավաճաններին և խարեւոններին (բուրժուա-  
զիայի ագենտներին)։

Բայց չնայած բայրը դավաճանություններին, ինչ-  
պես նաև անզլիական և հնդկական բուրժուազիայի  
միացած ջանքերին, հեղափոխական շարժումը Հնդկաս-  
տանում ամբանում է։

Չնայած հեղափոխական բանվորների և գյուղացի-  
ների վերաբերմանը գործադրած դաման համաճանակնե-  
րի վերաբերմանը գործադրած դաման համաճանակնե-

րին և գագանույթն ճեղումներին, Հնդկաստանում ազում  
և կոմունիստական կուսակցությունը:

Նա գեռ յերիտասարդ և: Անընդհատ հարվածներ  
են հասցնում նրան անզիստական խմբերի լիստերը և  
Հնդկական բուրժուազիան, վորոնք իրենց ձեռքին ու-  
նեն ուսպական և վոստիկանական հոկույական ուժեր:

Բայց կոմունիզմի գործը, Մարքսի և Լենինի դոր-  
ծը չի կարելի սպասել վոչ մի գենքով:

### ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՏԱՎՈ- ՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ Ե

Հնդկական բանվորներն ու գյուղացիները հետզհ-  
տե համոզում են, վոր կոմունիստական կուսակցու-  
թյան արդարացի յի:

Շատ հետաքրքիր և պատմել Պենջար ըլջանի բան-  
վորների և գյուղացիների մի կոնֆերենցիալի մասին:  
Այդ կոնֆերենցիալում մասնակցում էին 25 հազար  
հոգի, զիսավորապես գյուղացիներ: Այդ կոնֆերենցի-  
ալում հանդես յեկայի գյուղացի Սինդը, վոր առաջ.

«Ազգային կոնգրեսը գտնվում է կապիտալիստների  
անդին, չի պաշտպանում բանվորների և գյուղացիների  
շահերը: Նա ոգնում է միայն կապիտալիստներին: Կոն-  
գրեսը ձգուում է անգիտական կապիտալիստական կա-  
ռավարությունը փոխել հնդկական կապիտալիստների  
կառավարությամբ: Հնդկական կառավարությունը  
գյուղացիության մեղադրում է բայլշեվիզմի մեջ: Յե-  
թե ինականոր ազատության պահանջը նշանակում է  
բայլշեվիզմ, այն ժամանակ մենք բոլորս են բայլշեվի-  
թեր ենք»:

Աշխատավորությունը հականում և, վոր ստրկու-  
թյունից, շահագործութից, աղքատությունից ու սովոց

ազատվելու մի ճանապարհ կա միայն: Այդ ճանապարհը  
ցուց ե տվել Անգլիայի: Կոմունիստական կուսակցությու-  
նըն այդ ճանապարհով է տանում Հնդկաստանի աշխա-  
տավորությանը:

Բանվորներն ու գյուղացիները պայքարի վարձով հա-  
մոզվեցին, վոր այդ ճանապարհը միակն է, վոր աշխա-  
տավորությանը կհասցնի լիստատար ազատագրման:

Հնդկաստանի կոմունիստական կուսակցության  
պահանջները կայանում են հետեւում:

1. Հնդկաստանի լիստատար պետական ազատու-  
թյուն՝ խօրտակելով անգիտական տիրապետությունը  
բռնի միջոցով: Բոլոր պարտիերի վերացում: Անգիտ-  
ական բոլոր ձեռնարկությունների, բանկերի, յերկարու-  
դիների, ծովային և գետային նավագնացության և  
պլանացիաների ազգայնացում:

2. Խորհրդական իշխանությունը ՀԱՍՏԱՏԱԿՄ,  
ազգային փաքրամասնությունների ինքնորաշխան իրա-  
վությունին մինչև բաժանվելը, տեղական իշխանությունների  
վոչչացումն, հնդկական ժեղերասին բանվորա-  
գյուղացիական խորհրդային համբարետությունների  
առեղջում:

3. Առանց հասուցման ԿՈՆԳՐԵՍԱՑԻԱԼԻՑ ՅԵ-  
ՅԱՐԿԵԼ կալվածատերերի, տեղական իշխանների,  
յեկեղեցիների, անգիտական կառավարության, չի-  
նական կառավարությամբ փոփ հոդերը, ան-  
տառները և ամրաջ գույքը՝ ՀԱՆՉԵԼԱՊ, ԱՅԴ ԱՇԽԱ-  
ՏԱՎԱՐ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ, վա-  
չընացնել սորմական պայմանները և գյուղացիների  
ունեցած բոլոր պարտիերը վաշխառուներին ու բան-  
կերներին:

4. Ուժմամյա բանվորական որ և աշխատանքի պայմանների արմատական բարելավում, աշխատավարձի ավելացում և գործազրկության պետական սպահովագրություն :

Բանվորները և գյուղացիները պայքարում են խորհրդագյուղին Հնդկաստանի Համար՝ ընդդեմ իմպերիալիստների և Հնդկական կալվածատերների ու բուրժուազիայի ճնշումների :

Հնդկաստանի բանվորների ու գյուղացիների հաղթանակը խոչը նշանակություն ունի վող աշխարհի պրոլետարիատի պայքարի համար։ Հեղափոխությունը Հնդկաստանում կարաղացնի հեղափոխությունը մյուս յերկրներում։

Հնդկաստանը կանգնած է հեղափոխության շեմքին։ Աշխատավորության միջնամասը մասսաներն ամրացրող կռմունիստնկան կուսակցության վեկավարությամբ գեն կշպատեն անդլիական իմպերիալիստների և Հնդկական կապիտալիստների ու կալվածատերների տոհիք լուծը։

«Ազգային գրադարան»



NL0202158

ԴԻՎ 20 ԿՈՊ. (1<sup>1/4</sup> մ.)



Д. ИХОК

ИНДИЯ ПОД ГНЕТОМ КАПИТАЛА.

Госиздат ССР Армении  
Эревань—1992